

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը Երևանում մասնակցել է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նիստին

Վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ կառավարությունում մարտի 6-ին տեղի է ունեցել հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նիստ, որին մասնակցում էր նաև ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ.Դավթյանը:

Ներկայացվել է 2014 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային, Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովների կողմից հաշմանդամներին սոցիալական ծրագրերում ներառելու ուղղությամբ կատարված աշխատանքները:

Զեկուցվել է, որ պետական ծրագրերն ուղղված են եղել անմրցունակ խմբերի, մասնավորապես հաշմանդամների զբաղվածության խթանմանը: Ուշադրության կենտրոնում է եղել հաշմանդամություն ունեցող անձանց կրթության հասանելիության խնդիրը, մատչելի քաղաքաշինական միջավայրի հարցը: Նշվել է , որ մի շարք ծրագրեր 2015 թվականի ընթացքում լինելու են շարունակական: Հաշվի առնելով նաև մարզային հանձնաժողովների հաշվետվությունները՝ տեղի է ունեցել մտքերի շահագրգիռ փոխանակություն, որի ընթացքում հնչել են բազմաթիվ առաջարկություններ՝ հաշմանդամների խնդիրների լուծման նպատակով:

Ամփոփելով նիստի ընթացքում ներկայացված հաշվետվությունները՝ վարչապետ Աբրահամյանը նշել է, որ հաշվետու ժամանակահատվածում կատարվել է ծավալուն աշխատանք, որը պետք է կրի շարունակական բնույթ: Հ. Աբրահամյանը ՀՀ քաղաքաշինության նախարարին, Երևանի քաղաքապետին և հանրապետության բոլոր մարզպետներին հանձնարարել է խիստ ուշադրություն դարձնել նոր կառուցվող և վերանորոգվող շենք-շինությունների նախագծման ու կառուցման աշխատանքներին, որպեսզի պահպանվեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները հաշվի առնող քաղաքաշինական բոլոր նորմերը, հետամուտ լինեն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական դրսևորումները բացառելուն: